ՊԱՏՎՈԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 28-ին, երկուշաբթի օրը, կեսօրից հետո, ժամը 13-ին, Վեհարանում, հանդիսավոր իրադրության մեջ, «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակի առիթով Սովետական Միության Խաղաղության պաշտպանության Կենտրոնական կոմիտեի պատվոգրեր հանձնվեցին խմբագիր Արթուն Հատիտյանին և խմբագրությանը՝ խաղաղասիրական և հայրենասիրական երկարամյա գործունեության համար:

Հանդիսությանը նախագահում էր լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը: Ներկա էին՝ Տիրամայրը, Մայր Աթոռի միաբանությունը, վանքի պաշտոնեությունը:

Պատվոգրերի տվչությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի քարտուղար տիկին Հեղուշ Խաչատրյանը ընթերցում է Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պատվոգրերը և ապա, ջերմորեն շնորհավորելով խմբագրին և խմբագրությանը բարձր պարգևի առիթով, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ խմբագիր Ա. Հատիտյանին է հանձնում երկու պատվոգրերը:

Շնորհավորության ջերմ խոսքեր են ասում, հանուն Վեհափառ Հայրապետի՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հանուն հոգևոր ճեմարանի՝ տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, և հանուն Մայր Աթոռի պաշտոնեության՝ դիվանապետ Հ. Առաքելյանը:

Բարձր պարգևի առիթով «Էջմիածին» ամսագրի խմբագրին և խմբագրությանը շնորհավորում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Հանդիսության ավարտին սրտագին շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում խմբագիր Ա. Հատիտյանը՝ Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեին և Հայաստանի կոմիտեին ուղղյալ, և շեշտում, որ «Էջմիածին» ամսագիրը այսուհետև էլ խաղաղության ջերմ պաշտպան Վեհափառ Հայրապետի գլխավորության և օրհնության ներքո կշարունակի նաև իր խաղաղասիրական, մարդասիրական գործունեությունը, որը բնական հետևանքն է հայ եկեղեցու քրիստոնեական համոզմունքների, քրիստոսավանդ պատգամի, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեության ու մարդասիրական վեհ իդեալների:

Խաղաղությունը Աստուծո կամքն է:

Հանդիսության ավարտին տեղի է ունենում մտերմական շրջանակի մեջ հյուրասիրություն:

Ներկաներից շատերը ջերմորեն շնորհավորում են «Էջմիածին» ամսագրի խմբագրին և խմբագրությանը բարձր պարգևի առիթով և հաջողություն մաղթում նրանց՝ հետագա էլ ավելի բեղուն խաղաղասիրական և մարդասիրական գործունեության մեջ:

ПОЧЕТНАЯ ГРАМОТА

1949 — XX лет Всемирного движения за мир — 1969

Журнал „Эчмиадзин"
Орган Католикосата всех Армян

награждается
Почетной Грамотой
Советского Комитета
Защиты Мира
за активную деятельность
по укреплению мира
между народами

Председатель Советского
Комитета защиты мира
Ответственный секретарь
комитета

№ 1165 Москва 30 мая 1969

«Էջմիածին» ամսագրի խմբագրությանը հանձնված պատվոգիրը